ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԷԼԻՏԱՅԻ ԹՇՎԱՌՆԵՐԸ

ՉԱՐԱՃԱՀՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՆՊԱՏԻԺ ՄՆԱՑԻՆ

Շարունակում ենք ներկայացնել Մոսկվայում ՀՀ նախկին դեսպան Արմեն Սմբատյանի անցած ուղին:

Շատերի հիշողության մեջ է մնացել երգի պետական թատրոնից հեռարձակվող մի հաղորդում, երբ համերգավարի այն հարցից հետո, թե՝ «որքա՞ն է նախարարի աշխատավարձը», Արմեն Սմբատյանը շուտ եկավ եւ իր կողքին նստած կրթության նախարարից սկսեց պարզել, թե ինքը՝ որպես նախարար, ինչքա՞ն աշխատավարձ է ստանում... Պետք էր ենթադրել, թե նա աշխատում էր անվճար, անձնվիրաբար՝ «հացիվը» ստորադասելով «բանիվին»... 1997-ից Սմբատյանը ստանձնեց նաեւ ԱՕԿՍ-ի նախագահի պաշտոնը: 2001-ին իր «բազմաչարչար եւ ազգանվեր» գործունեության համար Արմեն Սմբատյանը պարգեւատրվեց «Մովսես Խորենացի» մեդալով: Մեկ տարի անց նա արդեն Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանն էր: Թե ինչպես պատահեց, որ կոնսերվատորիայի տնօրենը, ջունենալով դիվանագիտական կրթություն եւ աշխատանքի փորձ, նշանակվեց ամենաառանցքային համարվող երկրներից մեկում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար, նույնպես «առեղծվածների» շարքին է պատկանում: Ասում են, որ այստեղ էլ մեծ դեր է կատարել ՀՀ ԳԱԱ պրեզիդենտը: Կոնսերվատորիան մշտապես իր հսկողության տակ պահելու համար Արմեն Սմբատյանն այստեղ ռեկտոր նշանակել տվեց Սերգեյ Սարաջյանին, մի մարդու, ով պատրաստ էր լռելյայն կատարել «ՇԵՖի» բոլոր պահանջները:

Հենց Սմբատյանի պահանջով էլ կոնսերվատորիայի հարկաբաժիններից մեկն առանձնացավ, այստեղ կառուցվեց փորձասենյակ՝ իր բոլոր հարմարություններով եւ անգամ «ջակուզիով» Սմբատյանի որդու համար, ում ստեղծագործական «ձեռքբերումները խթանելու» համար ստեղծվեց պետական երիտասարդական նվագախումբը: Կոնսերվատորիայի շենքում այսօր գերակշռում են ավերակները, անմխիթար վիճակում է հայտնվել օպերային ստուդիայի դահլիճը, շատ լսարաններում անհնար է քայլել, որովհետեւ մանրատախտակը թռչում է քայլողների դեմքերին, իսկ ահա առանձնացված հարկաբաժինը ծառայում է միայն Սերգեյ Սմբատյանին, ով դարձել է Հայաստանի միակ ու «տաղանդավոր» երիտասարդ դիրիժորը, որի փորձերն անց է կացնում ականավոր դիրիժոր, ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Յուրի Դավթյանը՝ նվագախումբը պատրաստելով այն բանին, որ հայտնվի «երիտասարդ տաղանդ» ու շարժի փայտիկը... Հիմա արդեն Արմեն Սմբատյանը նոր ռեկտորացու է գտել եւ ամեն ինչ անում է, որպեսզի հերթական դրածոն դառնա իր կամակատարը: Իր «թիմակիցներին» աշխատեցնելու եւ նրանց միջոցով իր «ձեռքբերումները» բազմապատկելու համար է, որ այսքան տարի Սմբատյանը հովանավորում է մշակույթի նախարար Հատմիկ Պոդուսյանին...

Մոտ տասը տարի Ռուսաստանում ղեկավարելով Հայաստանի դեսպանությունը՝ Արմեն Սմբատյանը դիվանագիտական որեւէ ձեռքբերում չարձանագրեց, ոչինչ չարեց Հայաստանի համար, սակայն փոխարենը բազմապատկեց իր ֆինանսական միջոցները, ինտեգրվեց ռուսական բիզնեսին, նպաստեց այն բանին, որ ծախողվեն բազմաթիվ դիվանագիտական ծրագրեր:

Ի վերջո Սերժ Սարգսյանը որոշեց բարկանալ Արմեն Սմբատյանի վրա, եւ նրա լիազորությունները դադարեցվեցին: Թեեւ ի սկզբանե որոշված է եղել Արմեն Սմբատյանին դեսպանի պարտականություններից ազատելուց հետո նշանակել ՀՀ մշակույթի նախարար, սակայն Սմբատյանի «լեւի գործերը» նախարար դառնալու բոլոր շանսերն ի դերեւ դարձրեցին: Դեսպան Սմբատյանը տարաբնույթ չարաշահումներ էր թույլ տվել իր գործունեության ընթացքում, որոնց մասին Սերժ Սարգսյանին զեկուցել էին վերահսկիչ պալատի նախագահն ու ՀՀ նախագահի վերահսկողության ծառայության ղեկավարը: Բայց այդ տեղեկությունները չհրապարակվեցին, քանի որ երկրի վարկանիշի խնդիր կար:

Եւ այսպես, Արմեն Սմբատյանը Մոսկվայում գտնվող Հայաստանի դեսպանատան տարածքի զգալի մասը վարձակալական հիմունքներով տվել էր այլ կազմակերպությունների եւ այդ գումարները չէր ծախսել դեսպանատան կարիքները հոգալու համար: Լուրեր կան, որ Մոսկվայում բնակվող հայ կամ ռուս հայտնի հեղինակություններին Սմբատյանը օգնել է հայկական անձնագրեր ձեռք բերել, բնականաբար, ոչ մարդասիրական մղումներից ելնելով: Տեղեկություններ կան նաեւ այն մասին, որ Արմեն Սմբատյանը Հայաստանի դեսպանատան մեքենաների կարմիր համարանիշերը հաճախ տվել է տարաբնույթ հեղինակությունների՝ դարձյալ ոչ հումանիտարական մղումներով: Ի դեպ, այս սովորույթը տարածված է գրեթե բոլոր երկրների դեսպանատներում, քանի որ դիվանագիտական համարանիշերը «կանաչ լույս» են վարորդների համար: Ռուսաստանում Հայաստանի դեսպանը նաեւ տարբեր հանդիպումներ ու միջոցառումներ կազմակերպելու համար ՀՀ պետբյուջեից ստացած գումարներն է ոչ արդյունավետ ծախսել:

Այս ամենի արդյունքում մեկ տարի առաջ թողնելով դեսպանի պաշտոնը, համաշխարհային դիվանագիտության մեջ իր երկարակեցությամբ սահմանելով յուրատեսակ ռեկորդ՝ Արմեն Սմբատյանը նշանակվեց ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի գլխավոր տնօրեն եւ առաջին գործը համարեց մեկնել Բաքու՝ մասնակցելու Ուզեիր Հաջիբեկովի ծննդյան 125-ամյակի միջոցառումներին...

Ի դեպ, ՌԴ-ում ՀՀ այսօրվա դեսպանը Լեռնային Ղարաբաղի Աժ նախկին նախագահ, արժութային հիմնադրամի նախկին տնօրեն, Բելառուսի արդեն նախկին դեսպան Օլեգ Եսայանն է:

ՆԱՐԵԿ ԼԵՎՈՆՅԱՆ